ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի թ. 186-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ /ԹՐԱՖԻՔԻՆԳԻ/ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ /ԳԱԾ/ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2014 թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՀԴՊ ԳՎ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԲԱԺԻՆ

ԳԱԾ-ի համապատասխան կետը	Միջոցառումները	Տեղեկատվություն իրականացված միջոցառման/ների վերաբերյալ /այդ թվում ըստ գնահատման ցուցիչների/	Այլ նշումներ
2	Վերանայել ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի N 1385-Ա որոշմամբ հաստատված մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը	Աշխատանքներ են իրականացվել <<Թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին>> ՀՀ օրենքի նախագծի լրամշակման ուղղությամբ, որը ներկայումս գտնվում է ՀՀ Ազգային ժողովում:	
8	Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ երիտասարդության իրազեկության բարձրացման նպատակով կազմակերպել քննարկումներ, հանդիպումներ, դասընթացներ և այլն	Անչափահասների շրջանում կանխարգելիչ դաստիրակչական աշխատանքներ իրականացնելու, ինչպես նաև անչափահասների նկատմամբ կատարվող բռնություններից նրանց զերծ պահելու նպատակով՝ ս.թ. ապրիլ ամսին ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների ուժերով, սպասարկվող վարչական տարածքներում գործող դպրոցներում կազմակերպվել և անց են կացվել հանդիպումներ, զրույցներ, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել անչափահասների շահագործման (թրաֆիքինգի) խնդիրներին: Անչափահասների շրջանում մուրացկանության և թափառաշրջիկության դեպքերը նախականխելու, վերջիններիս մուրացկանության մեջ ներգրավող անձանց հայտնաբերելու /անչափահասների թրաֆիքինգի և շահագործման ենթարկելու ռիսկի նվազեցման/, ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալի 10.02.2014թ. թիվ 4Ց ցուցումի պահանջների համաձայն 2014թ.-ին կազմակերպվել և անց են կացվել լայնածավալ միջոցառումներ, այդ թվում	

		նաև ստուգայց շրջագայություններ, որոնց ընթացքում անչափահասների հետ իրականացվել են կանխարգելիչ աշխատանքներ:	
15	Կազմակերպել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի)՝ հատկապես աշխատանքային և երեխաների շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ դասընթացներ ներքոհիշյալ պետական մարմինների աշխատակիցների համար՝	ՀՀ ոստիկանության կրթահամալիրում <<Թրաֆիքինգի>> խնդիրներին վերաբերող դասընթացներ են կազմակերպվել ոստիկանության ծառայողների տարբեր խմբերի՝ ընդհանուր առմամբ շուրջ 450 ծառայողների համար, որոնցից 20-ը հանդիսանում են ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողներ:	
20	ՀՀ դատախազության, ոստիկանության, և ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների համար կազմակերպել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) և փողերի լվացման հետ կապված հանցագործությունների բացահայտման, քննության և քրեական հետապնդման վերաբերյալ համատեղ սեմինար- քննարկումներ	ՀՀ ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները մասնակցել են <<Ամքոր Հայաստան>> ՀԿ-ի կողմից կազմակերպված՝ թրաֆիքինգի և փողերի լվացման հետ կապված հանցագործությունների բացահայտման, քննության և քրեական հետապնդման հարցերի վերաբերյալ համատեղ սեմինար- քննարկմանը:	
37	Շարունակել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ուղղորդման կարգի կիրառումը՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց տրամադրելով կարգով սահմանված աջակցությունը, այդ թվում նաև բժշկական, սոցիալական, հոգեբանական, իրավական օգնություն և խորհրդատվություն, ինչպես նաև կազմակերպել նրանց վերականգնողական աշխատանքները	Հետագա աջակցություն ստանալու համար իրենց համաձայնությունը տվել և <<Ամքոր Հայաստան>> և <<Հույս և օգնություն>> ՀԿ-ներ են ուղղորդվել թրաֆիքինգի ենթարկման վտանգի տակ հայտնված 8 անձ:	
43	Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ արդյունավետ պայքարի նպատակով ընդլայնել և բարելավել համագործակցությունը օտարերկրյա իրավապահ մարմինների հետ	Մարդկանց թրաֆիքինգի ոլորտում ընթացիկ գործերով անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու նպատակով հաշվետու ժամանակաշրջանում փոխհամագործակցությունն առավել ինտենսիվ իրականացվել է Թուրքիայի, ԱՄԷ-ի և Բելգիայի Ինտերպոլի ԱԿԲ-ների հետ:	